10803

Խ-34

Վ. ԽԱՆՁԻՆ

ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

—

ՀՐ 30 ԿՈՊ.

ՅԿԻՈՍ
Խ-26

ՊԵՏՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1933

3Кн0П
Խ-26
10803

36753-62

В. ХАНЧИН

Основные методы
Коммунистического воспитания
юных пионеров

Госиздат ССР Армении
Эривань 1933

Պատ. խմբագիր՝ Ս. Սարգսյան
Թարգմ. Վ. Թերզիբաշյան
Եխ. խմբ. Գ. Զենյան
Սրբագրիչ՝ Հ. Ստեփկյան
անձնված է արտադրության 9 հունիսի 33 թ.
Ստորագրված է տպելու 5 ոգոստոսի 33 թ.

Գետեբատի Տպարան, Գլավլիտ № 8197 (թ), Հրատ. № 2626
Պատվեր № 1509, Տիրաժ 1000

ՀՍՍՀ-ՍՍՀ Ա. Մասիսյան անվան գրադարան

16.05.2013

08 DEC 2008

24 SEP 2006

I. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Ապագաակարգային» դաստիարակության առաջադրանքը

Ահա մի քանի բնորոշումներ դաստիարակության նպատակի մասին: Առաջինը—«Նպատակն է դաստիարակել որինակելի քաղաքացի», յերկրորդը—

«Ներդաշնակ կերպով զարգացնել յերեխայի ֆիզիկական և հոգեկան ուժերը»: Բավարարո՞ւմ են ձեզ արդյոք այս բնորոշումները: Իհարկե, վոչ, վորովհետև թե՛ մեկի և թե՛ մյուսի մեջ չկա հիմնական տարրը—դասակարգայնությունը:

«Նպատակն է դաստիարակել որինակելի քաղաքացի»: «Որինակելի քաղաքացի» հասկացողությունը կարելի յե ըմբռնել ինչպես վոր ուզես: «Ներդաշնակ կերպով զարգացնել ֆիզիկական և հոգեկան ուժերը»: Ի՞նչ բանի համար, ի՞նչ նպատակով: Ի՞նչ բանի յեն ծառայելու այդ ուժերը: Ինչպես տեսնում ենք այս կլասիկական բնորոշումները անտեսում են դասակարգային եյությունը:

Սակայն հենց այս հանգամանքը մերկացնում է այդ բնորոշումների հեղինակների դասակարգային դեմքը: Ո՞վ է առհասարակ քողարկում իր նպատակների դասակարգայնությունը: Բուրժու-

ազիան։ Դժվար չէ հասկանալ, ինչո՞ւ։ Ցերը մի բուռը կապիտալիստներ, լցնելով իրենց գրպանը, խեղդում են միլիոնավոր աշխատավորների, ապա նրանք պետք է թաղցնեն, ստիպված են թաղցնել՝ իրենց իսկական նպատակները։ Հո՛ նրանք չե՞ն խոստովանելու, վոր իրենց դավակներից աղաներ են դաստիարկում, իսկ պրոլետարիատի յերեխաներից դաստիարակում են ստրուկներ իրենց դավակների համար։

Այդ ակներև բուրժուական ձևակերպումները դուք կարող եք գտնել շատ պատկառելի մանկավարժների գրքերում և մանկավարժական այն գրքերում, վորոնցով դաստիարակվել է ներկա դպրոցի մանկավարժների մեծամասնությունը։

Հարց տանք մեզ, հնարավո՞ր է արդյոք վոչ դասակարգային դաստիարակություն, հնարավո՞ր է արդյոք վոչ քաղաքական-ապաքաղաքական դաստիարակություն։ Վո՛չ, հնարավոր չէ։ Դասակարգային հասարակության մեջ դաստիարակությունը նույնպես դասակարգային է։ Դասակարգերը պայքարում են քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար։

Բուրժուազիան քողարկում է այդ, վերևում մենք տեսանք, թե ինչու բանվոր դասակարգը կարիք չունի թաղցնելու դաստիարակության դասակարգային նպատակները։ Այդ նպատակները պայծառ և բացահայտ կերպով արտահայտված են թեյուղ պատանի պիոներների որենքներում։ Վերցնենք որինակ այս որենքը. «պիոները ձգտում է ուսման և ոգնում է ուրիշներին սովորելու»—այստեղ դրված է վերջակետ, բայց որենքը դրանով չի վերջանում. «գիտությունը և հմտությունը ուժ են բանվորական գործի համար մղված պայքարում»։ Նշանակում է վոչ պարզապես գիտություն, վոչ պարզապես ունակություն, այլ գիտություն և ունակություն վորպես ուժ բանվորական գործի համար մղվող պայքարում։

Մի այլ որենք. «պիոները պատրաստվում է դառնալ անձնվեր մարտիկ բանվոր դասակարգի շահերի պաշտպանության համար, սոցիալիզմի համար»։ Ուշադրություն դարձրեք—«պիոները պատրաստվում է դառնալ վոչ թե անձնվեր մարտիկ առհասարակ, այլ մարտիկ «բանվոր դասակարգի շահերի պաշտպանության համար, Սոցիալիզմի համար»։

Մենք ընդգծում ենք դաստիարակության դասակարգային եյությունը, մենք ընդգծում ենք մեր քաղաքական նպատակները։

Վերակառուցման շրջանում, յերբ սոցիալիստական տարրերը ուժեղացնում են իրենց հարձակումը կապիտալիստական տարրերի վրա, վերջիններս, բնական է, դիմադրություն են ցույց տալիս, հակահարված են կազմակերպում, կուլակը, Նեպմանը և նրանց իդեոլոգները զգալով իրենց կորուստը արհասարակ դիմադրություն են ցույց տալիս սոցիալիզմի վճռական հարձակմանը։ Սրվում է դասակարգային պայքարը։ Այժմ մեզանում այնպես է սրվել դասակարգային պայքարը, վոր

դասախարակության դասակարգային մոմենտը պետք է առանձնապես չեշտել, հատկապես ըդդծել։

Այսորվա դասակարգային պայքարը արտահայտվում է վոչ միայն կուլակի դեմ, կոլեկտիվացման համար մղված պայքարում, այլ և թափանցում է մյուս բնագավառները։ Վերցրեք որինակ դիտության բնագավառը—այնտեղ նույնպես պայքար է տեղի ունենում։ Գյուղատնտեսական շատ «գիտուն» և «հմտալից» գրքերում գրված է, վոր գյուղատնտեսությունը «իր բնությամբ» չի կարող խոչոր լինել, այլ կարող է լինել միայն մանր և պետք է ասել, վոր այդ մանրամասն «հիմնավորվում» է տեսականորեն։ Դուք տեսնում եք, վոր այդ «թեորիան» ամբողջապես ներկայացնում է քաղաքական վորոշ գիծ—«գյուղատնտեսությունը կարող է միայն լինել մանր և անհատական։ Մենք ջախջախեցինք այդ «թեորիան» գյուղատնտեսության զարգացման փաստերով վերջին տարվա ընթացքում։

Նույնը կարելի է տեսնել նաև մանկավարժության բնագավառում։ Վերցնենք թեկուզ 1929 թվին հրատարակված «դասախարակության սոցիոլոգիա» անունով գիրքը։ Այդ գրում է մի մարդ, վոր հավանություն ունի մարքսիստ կոչվելու։ Նա ասում է.—«յերեխաները չունեն դասակարգային փորձ»։—Հիշեցեք ձեր մանկությունը—հնարկանում է՞յիք դուք այն ժամանակ, թե ինչ է նշանակում հարուստ, աղքատ և այլն։ Իհարկե հասկանում եյիք և նույնիսկ զգում եյիք ուժեղ կերպով։

Դասակարգային պայքարի սրման մոմենտին մենք առանձնապես ուշադիր պետք է հետևենք, թե ինչ է անում դպրոցը։ Պիոներական կազմակերպությունների վրա ընկնում է շատ մեծ պատասխանատվություն—չե՞ վոր նա մանկական մասսայի կոմունիստական ավանգարդն է, կոմյերիտմիության ոգնական ուժը։

Ներկա մոմենտին մենք բացառիկ ուժով պետք է չեշտենք դասակարգայնությունը առհասարակ մասսաների դաստիարակության, մասնավորապես յերեխաների և հատկապես պիոներների դաստիարակության գործում։

Մենք նայում ենք ապագային

Ինչպե՞ս պետք է նայենք մենք պիոներական կազմակերպության դաստիարակության վրա։ Դեռ 10 տարի առաջ Լենինն ասել է,—վոր այն ներունդը, վորը այժմ (այսինքն՝ այն ժամանակ) 15 տարեկան է, կտեսնի սոցիալիզմը։ Մենք տեսնում ենք, վոր այդ ժամանակը շատ և շատ մոտիկ է. Մենք կառուցում ենք սոցիալիզմ, մենք կտեսնենք նրան, մենք կապրենք նրանում։ Նշանակում է, վոր այդ պետք է լինի մեր ուղեգիծը։

Արդեն այժմ մենք ունենք այդ նոր կյանքի առանձին նշանները։ Որինակ, կոմունիստական մանկավարժության տեսակետից դիտեցեք մեր կյանքի մի շարք ամենահետաքրքիր յերևույթները։

Բանվորական բրիգադները գնում են գյուղ։ Այստեղ մենք տեսնում ենք միանգամայն նոր,

չտեսնված յերևույթ—գործարանային աշխատանքի միացումը գյուղատնտեսական աշխատանքի հետ, դա պոլիտեխնիզմի գլխավոր տարրերից մեկն է: Յեթե բանվորը առաջ շղթայված էր իր մեքենային և գիտեր միայն իր վորոշ պրոֆեսիան, իսկ մյուս բաներից տեղեկություն չուներ, ապա այժմ այդ գազգյահի բանվորը գնում է աշխատելու գյուղատնտեսության մեջ և հետո վերադառնում է իր գազգյահի մոտ, այսինքն՝ նա այլևս «միատեխնիկ»—մոնոտեխնիկ չէ, այլ «բազմատեխնիկ»—պոլիտեխնիկ:

Երրիչ մոմենտ. կազմակերպվում են գործարան—տեխ. բուհեր, այսինքն գործարաններ, վորոնք միաժամանակ լինելու յեն տեխնիկական ուսումնական հիմնարկները: Սա ել ավելի նշանակալից յերևույթ է, իսկական պոլիտեխնիզմի գլխավոր տարրը: Այդ վկայում է, մոր ջնջվում է մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած տարբերությունը, այն այլանդակությունը, վորը ծնունդ է տալել և սնվում է բուրժուական հասարակության ծոցում:

Յեթե մենք խոսում ենք պոլիտեխնիկական դաստիարակության մասին, ապա մենք խոսում ենք նաև բազմակողմանի կրթության մասին: Իհարկե, բազմակողմանի զարգացումը չի նշանակում, վոր մարդը պիտի գիտենա ամեն ինչի մասին, բայց հիմնավոր կերպով վոչինչ: Սակայն ունենալով, այսպես ասած, մասնագիտություն, մարդը կունենա նաև ընդհանուր լայն ծանոթություն ընդհանրապես կուլտուրայի ամբողջ հարստության հետ: Սոցիալիստական հասարակության մեջ կիրականան անդլիացի բնագետ Հեքսլիի Ղասաքերը «գիտենալ վորոշ բան ամեն ինչի մասին և ամեն ինչ՝ վորոշ բանի մասին»:

Որինակի համար վերցրեք սոցիալիստական մրցումը: Հայտնի է, վոր յերբ Խորհուրդները գինված ուժով ճնշելու միտքը, ջուրն ընկավ, խելք բուրժուան իր հույսը դրեց այն բանի վրա, թե Խորհրդային իշխանությունը կընկնի ինքն իրեն, մղիչ ուժ, խթան չի լինի արտադրական ուժերի զարգացման համար (իհարկե նա միաժամանակ չեր հրաժարվում ինտերվենցիայի մատաղությունից): Բուրժուայի գլխում չի կարող տեղ գտնել այն միտքը, թե բացի կոնկուրենցիայից կարող են լինել միանգամայն տարբեր, ավելի ուժեղ խթաններ զարգացման համար: Բուրժուական կարգերում վորոնք են կուլտուրան, տեխնիկան, արտադրողական ուժերն առաջ մղող խթանները: Կոնկուրենցիան և քաղցը: Մենք չենք կարող կոնկուրենցիան դարձնել զարգացման մղիչ: Կոնկուրենցիան այն կռիվն է, վորից մեկը շահում է, մյուսը կորցնում, մեկը՝ հարստանում, մյուսն՝ աղքատանում: Մենք չենք կարող գնալ այդ ճանապարհով: Մենք ունենք բոլորովին այլ ուղի, վոր ցույց է տվել Լենինը, և այդ ուղին արդեն ստուգվում է գործնականում, դուք լավ գիտեք այն դա սոցիալիստական մրցումն է: Մենք ունենք հարվածային բրիգադներ, մենք ունենք արդեն հար-

վածային ցեխեր և նրանք դառնում են կոմունիստական ցեխեր, կոմունիստական գործարաններ: Յեվ այդ ցեխերն ու գործարանները նոր ձևով են դաստիարակում մարդկանց:

Ամեն ինչ կերպարանափոխվում է, վերակառուցվում նոր ձևով: Մարդիկ կերտում են սոցիալիզմ, սոցիալիզմը կերտում է նոր մարդկանց:

Նոր կյանքի այս բոլոր նախանշանները բաց են անում այն ապագայի, վարագույրը, որի համար մենք պայքարել ենք, պայքարում ենք և այսուհետև էլ կպայքարենք:

Յերեխաների դաստիարակության գործը մենք պետք է կառուցենք, ուղղությունը պահելով դեպի այդ նոր կյանքը, դեպի ապագան, կապելով այն այսորվա խնդիրների հետ:

Ո՞ՒՄՆ ԵՆՔ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՄԵՆՔ

Ուրեմն ո՞ւմ ենք դաստիարակում մենք: Կարճ ասելով, մենք պետք է դաստիարակենք կոմունիստներ: Ի՞նչ է նշանակում այդ: Փորձենք մանրամասն պարզել այդ հարցը, որովհետև կոլխոզը—նոր մանկավարժը հատկապես լավ պիտի իմանա այդ

Կոմունիստ դաստիարակելը նշանակում է դաստիարակել լենինյանի, բանվոր դասակարգի շահերին նվիրված և նրա համար կռվելու միշտ պատրաստ, իր առաջ բացվող պայքարի ուղին գիտակցող հասատատակամ մարդու: այդ նշանակում է յերեխային տալ հեռանկար: ինչի՞ց են առաջանում այլասերման անկման յերևույթները:

Հեռանկար չունենալուց, սոցիալական լայն նպատակների բացակայությունից, նպատակներ, որոնք կարողանային գրավել մարդուն և մանուկից դարձնել հասարակական կյանքին: Հենց այստեղ է այլասերման արմատը: Ոչ ավելի գրավիչ հեռանկար, քան նոր կյանք կառուցելու գործը: Սոցիալիստական գրավիչ հեռանկարի գոյությունը յերաշխիք է անկման, այլասերման արամադրությունների, խոպոռ վերացմանը:

Ի՞նչ է նշանակում դաստիարակել կոմունիստի: Այդ նշանակում է դաստիարակել այնպիսի մարդու, որ ընդունակ է պայքարելու պրոլետարիատի գործի համար, հաստատ հավատալով նրա իդեալների հաղթանակին: Մեզ պետք են մարդիկ, որոնք ունենան յերկաթե տոկունություն, պատրաստ կամք, որոնք կարողանան պայքարել և կռվել բանվոր դասակարգի գծի համար. կարողանան ամուր պաշտպանել այն, որոնք իրենց ամբողջ վարքագիծը, վարմունքը չափեն այդ դասակարգային գծի համապատասխան: Մեզ պետք չէ թուլակամ, անվճռական մարդիկ: Նրանք չեն դիմանում դասակարգային կռվին: Նայեցեք Բեզիմինսկու «կրակոց» (« Выстрел ») պիեսին: Տեսեք, ինչպես մարդիկ իրենց բարձրությունից ընկնում են չափազանց ցած, որովհետև չունեն բավականաչափ կամք, տոկունություն:

Դաստիարակել կոմունիստ—նշանակում է դաստիարակել կոլեկտիվիստ, ինտերնացիոնալիստ, մարտնչող անատված:

Ի՞նչ է նշանակում դաստիարակել կոլեկտիվիստ։ Կարո՞ղ է արդյոք մարդը զարգանալ, դրսևորել իր ընդունակությունները կոլեկտիվ կյանքից դուրս։ Իհարկե, վոչ։ Մարդը զարգանում է հենց կոլեկտիվում, այնտեղ է նա աճում, յերևան բերում իր ընդունակությունները։ Մեր պրոլետարական կոլեկտիվը դաստիարակում է կոլեկտիվիստ—անհատի։ Անհատը ինքն իրեն, կոլեկտիվից դուրս անըմբռնելի յե։ Փորձենք առանձնացնել, մեկուսացնել մարդուն նրա զարգացման սկզբնական մոմենտից, տեսնք, թե կարող է նա իր մեջ զարգացնել անհատականություն, թե նա պարզապես կդառնա վայրենի։ Կասկած չկա վոր նա կդառնա ամենասովորական կենդանի վայրենի։

Հիշեցնք, թե ինչպես Իլյիչի մահվան որը ամենքը ձգտում եյին դեպի կոլեկտիվ։ Վոչ վոք ժողով չեր հայտարարել, վոչ վոք հավաքույթ չեր նշանակել, բայց ամեն վոք շտապում եր ակումբ, ձեռնարկություն, հիմնարկ, փողոց, վորովհետև այդպիսի մոմենտին տանը նստել ինքնասպանության անհնար եր։ Հետևաբար կոլեկտիվիզմի հարցը շատ ավելի խոր է, քան այն առանձին տարաձայնությունները, վորոնք նկատվում են կոլեկտիվներում նրանց անկազմակերպվածության հետևանքով։

Դաստիարակել կոլեկտիվիստ—նշանակում է դաստիարակել այնպիսի մարդ, վորը միանգամայն այլ կերպ, նոր ձևով և վերաբերվում իրերին, վոչ միայն մարդկանց, վորովհետև իրերը չինվում են մարդկանց ձեռքով։ Նայած թե մարդը ինչ վերաբերմունք է ցույց տալիս հասարակական դույքին, կարելի յե ասել՝ ինդիվիդուալիստ է նա, թե կոլեկտիվիստ։

Դաստիարակել ինտերնացիոնալիստ։ Յերբեմն մեզանում լինում են այնպիսի մանր թեքումներ, յերբ շատ լավ գիտեն, ինչ է կատարվում Չինաստանում, հիանալի կերպով ծանոթ են Գերմանիայի անցուդարձին, գիտեն, թե ինչպես են ապրում Ամերիկայի պիոներները շատ լավ գիտեն, վոր «այնտեղ» ճնշում են նեգրերին,— սակայն մեզանում դեռ շարունակում են լսվել «ժիդ» (ջհուդ), «խոդյա» «խոզի ականջ» բառերը, իրենց քթի տակ կոլեկտիվում կատարվողը չեն նկատում։ Իհարկե ամենևին չի կարելի փոքրացնել ինտերնացիոնալ լայն կապի նշանակությունը։ Սակայն դա չպետք է մոռացնել տա ինտերնացիոնալ դաստիարակության հարցը ավելի «նեղ» իմաստով, այլ ընդհակառակը պետք է շեշտի այդ հարցը, այլապես ինտերնացիոնալ կապը կլինի անբովանդակ։

Դաստիարակել մարանչող անատամած—նշանակում է դաստիարակել մատերիալիստ, դեալեկտիկ, վորը ընդհանուր վոչինչ չունի վոգիների, անոտիապաշտությունների, կախարդության հետ, վորը հասկանում է բնության օրենքները և մարդկային հասարակության զարգացման օրենքները։

Դաստիարակել կոմունիստ—նշանակում է դաստիարակել հասարակական—ձևերից մարդ, կաղ-

մակերպիչ, վորը իր սեփական մասնակցությամբ թե՛ յերեխաներին և թե՛ չափահասներին ներգրավում է հասարակական կյանքի մեջ, նոր տիպի, նոր ֆորմացիայի մարդ, վորը չի կարող անհոգ անցնել այս կամ այն հասարակական հարցի, կոլեկտիվին վերաբերող այս կամ այն պրոբլեմի կողքով:

Դաստիարակել կոմունիստ–նշանակում է դաստիարակել բազմակողմանի կրթված, գիտելիքներով զինված, գիտության տեր մարդ՝ կոմունիստական շինարարության համար:

Դաստիարակել կոմունիստ–նշանակում է դաստիարակել ֆիզիկապես առողջ, ֆիզիկապես ամրակազմ մարդ:

Այսպես ուրեմն, մեզ հարկավոր է լենինյան, պայքարի ուղին գիտակցող, բանվոր դասակարգի գործի մարմիկ, հաստատակամ, անհաշտ կռվող պրոլետարիատի իդեոլոգիայի համար, կոլեկտիվիստ ինտերնացիոնալիստ, մարտնչող անաստված, հասարակական ձեռներեցության տեր կազմակերպիչ, պոլիտեխնիկապես դաստիարակված, բազմակողմանի կրթված մարդ,—ահա՛ նոր մարդը, ահա կոմունիստը: Այս հիման վրա պետք է դաստիրակվի մեր պիոները:

Այն պայմանները, վորոնց մեջ դաստիարակվում են պիոներները

Բայց ի՞նչ պայմաններում են դաստիարակվում մեր յերեխաները: Իհարկե, լավ բան է ունենալ իր առաջ պայծառ նպատակ, ունենալ լայն հայացքներ այն մասին, թե ի՞նչ ենք մենք ուզում դարձնել պիոներներին: Սակայն ի՞նչ պայմաններում են նրանք դաստիարակվում այժմ: Նախ և առաջ, մեր յերեխաները միայն դպրոցում չեն դաստիարակվում, ավելի ճիշտը, վոչ այնքան դպրոցումն են դաստիրակվում: Դառնանք նորից բուրժուական մանկավարժության: Բուրժուական մանկավարժությունը սիրում է ասել, վոր դաստիարակությունը կատարվում է միայն դպրոցում թող սոցիալ–դեմոկրատները խարեն բանվորներին, ասելով, թե նրանց յերեխաներից դպրոցում դաստիարակում են «տերեր», վնաս չունի, իսկ մենք, իսկական տերերս, կասենք վոր բուրժուական ռեակցիոն բանվորների յերեխաներին դաստիարակում են միմիայն սարուկներ–խոնարհ ծառաներ:

Ի՞նչն է այստեղ դաղտնիքը: Դաղտնիքն այն է, վոր յերեխաները դաստիարակվում են իրենց շրջապատող միջավայրում, իսկ այդ միջավայրը միայն դպրոցը չէ: Վերցնենք մի որինակ մեր շրջապատից: Ձեր առջևն է մի պլակատ, վորի վրա նկարված է մի մարդ, վեպի հերոսը, մենակությունից սատանի տանջված, հուսահատ յերևույթով հրավիրում է ձեզ կինո թատրոն: Այս պլակատը դաստիարակո՞ւմ է, թե վոչ: Իհարկե, դաստիարակում է: Հարցն այն է, թե ինչպե՛ս: Վերցնենք մի կինո–նկար, վորտեղ սպիտակ գվարդիականները դուրս են բերված վորպես հիմարներ, իսկական ապուշներ: Նման նկարը դաստիարակո՞ւմ է, թե վոչ: Դաստիարակում է, միայն վատ է դաստիարակում: Այն յերեխաներին,

վորանց վիճակվելու յե կռվել այդ սպիտակների դեմ, նրանց հետ դեմ-դեմի դալ կռվի դաշտում, ասում են, թե սպիտակները ապուշներ են: Յերեխաները պետք է ճանաչեն թշնամու վոչ միայն թուլ, այլ և ուժեղ կողմերը: Իսկ ի՞նչ է տալիս նման նկարը: Յերեխաները կասեն, յեթե սպիտակները բոլորն ել ապուշներ են, ի՞նչ կարիք կա պատրաստվելու, մենք նրանց փչելով կթռցնենք: Իսկ ընտանեական կենցաղը, մանր-սեփականատիրական, քաղքենական կենցաղը, վորի մեջ դանվում են յերեխաները իրենց ծնած որից: Վերցրեք տնական ներքին կյանքը, վորտեղ յուրաքանչյուր տնտեսուհի ունի իր անկյունը, իր պրիմուսը և այդ հողի վրա հարևանների հետ միշտ կռիվներ, վեճեր են ծագում—միթե այդ բոլորը չե՞ն դաստիարակում: Իհարկե, դաստիարակում են: Իսկ բակում, փողոցում, արամվայում, ընկերների միջև հաստատված բարքերը, սովորությունները, այն ամենը, վոր պայմանավորվում է ռայոնի, շրջանի արտադրական դեմքով, այն ամենը, վոր մենք մի բառով անվանում ենք միջավայր: Այդ միջավայրումն է դաստիարակվում յերեխան:

Ահա թե ինչո՞ւ, յերբ մենք խոսում ենք դաստիարակության մասին, դաստիարակության կազմակերպման մասին, մենք յերբեք չպետք է սահմանափակվենք դպրոցով, պիոներական կոլեկտիվով և այլն, այլ պետք է խոսենք ամբողջ միջավայրը մանկավարժորեն կազմակերպելու մասին:

Մենք մեծամասամբ նկարագրեցինք մեր միջավայրի բացասական կողմերը, վորպեսզի ուշադրություն դարձնենք այդ ուղղությամբ: Սակայն մեր միջավայրում որստորե աճում և բազմանում են նոր ֆակտորներ, վորոնք կոմունիստորեն դաստիարակում են յերեխաներին: Այդ ֆակտորները կվճռեն հարցը: Միայն թե մենք նրանց քիչ ենք ուշադրություն դարձնում: Պիոներներին դեռ հեռու յեն պահում գործարանից բանվորական մատաղ այդ հսկա դարբնոցից: Մինչդեռ նրանք հիմքում ունենալով ուսումնադաստիարակչական չաղկամը պետք է մտա կանգնեն արտադրական աշխատանքին: Այստեղ է դաստիարակության կոմունիստական սիստեմի բուն արմատը:

Սակայն վոչ մի բոպե չպետք է մոռանալ, վոր շրջապատող միջավայրում կան մեր դասակարգային թշնամու գործակալները, վորոնք դաստիարակում են մեր դեմ: Դա նախ և առաջ ինքը՝ դասակարգային թշնամին է: Բայց այդ հին սովորությունները, հին բարքերը, այդ կրոնական կազմակերպությունները, նախկին մարտիկը, իսկ յերբեմն գիտակից թշնամիները և վնասարարները,—նրանք անում են իրենց գործը: Յերբեմն դրանք հին ուսուցիչներն են: Թշնամիները ուժեղ դիմադրում են: Այդ դիմադրությունն ել ավելի յե ուժեղանում ներկայումս՝ անդասակարգ սոցիալիստական 2-րդ հնգամյակին անցնելու շրջանում: Հինը, կռվելով իր գոյության համար, կռվում է նաև յերիտասարդ կադրերի համար: Սակայն այդ պայքարումն ել «ով-ում» հարցը անխուսափելի կերպով կլուծվի մեր ոգտին:

367255-62

ՀՍՍՀ-ՍՍՀՄ

Կոմունիստի դաստիարակության մեթոդը

Կոմունիստ դաստիարակել հնարավոր է միայն միջավայրի ակտիվ փոփոխման պրոցեսում, պայքարելով այդ միջավայրի կոմունիստականացման համար: Փոխելով միջավայրը՝ փոփոխվում է ինքը՝ մարդը: Վորպես սկզբունք այդ ճիշտ է թե՛ չափահասների և թե՛ յերեխաների վերաբերմամբ:

Լենինը 1920 թ. կոմսոմոլի 3-րդ համագումարում արտասանած իր վայելուն, կոմունիստական մանկավարժության համար վերին աստիճանի արժեքավոր ճառում ասել է. «Յերիտասարդության միության խնդիրն է՝ այնպես կազմակերպել իր գործնական աշխատանքը, վոր սովորելով, կազմակերպվելով, համախմբվելով, պայքարելով այդ յերիտասարդությանը դաստիարակի ինքն իրեն և բոլոր նրանց, վորոնք նրան համարում են առաջնորդ, վորպեսզի նա դաստիարակի կոմունիստներ»: Ուշադրություն դարձրեք հետևյալ խոսքերի վրա. «...սովորելով, կազմակերպվելով, համախմբվելով և պայքարելով...դաստիարակի կոմունիստներ»: Նշանակում է, դաստիարակել սովորելով, կազմակերպվելով, պայքարելով, ակտիվ մասնակցելով հասարակական կյանքին:

Մենք, իհարկե, Լենինի հետ միասին դեմ ենք «ուսումնագետներին»: Ճիշտ է մենք գիտենք, վոր առանց հեղափոխական թեորիայի չկա հեղափոխական պրակտիկա, բայց մենք գիտենք նաև, վոր չի կարող լինել հեղափոխական թեորիա, առանց հեղափոխական պրակտիկայի:

Հեղափոխական թեորիան կոփվում է հեղափոխական պրակտիկայով, և ահա այդ պրակտիկային պետք է դիմենք մենք:

Նույն միտքն է արտահայտում Բեզիմենսկին իր «Կրակոց» («Выстрел») պիեսում: Այնտեղ կա հետևյալ խոսքերը.

> Մեր մեջ հնի մնացորդները դեռ կան: Կառուցելով կյանքն ու աշխարհը, մենք կառուցում ենք և մեզ:

Միթե՞ սա նույն միտքը չէ: Վերակառուցելով միջավայրը, վերափոխելով կյանքն ու աշխարհը, մենք վերափոխում ենք և մեզ:

Սակայն կոնկրետ կերպով ինչպե՞ս պետք է դաստիարակել կոլեկտիվում: Դիմենք նորից Լենինին, նրա նույն ճառին, արտասանված 3-րդ համագումարում: Լենինն այնտեղ ասում է, վոր պետք է սովորել, բայց ինչպե՞ս է նա հասկանում ուսումը: ...«իր ուսման բոլոր խնդիրները դնել այնպես, վոր ամեն որ ամեն մի գյուղում, ամեն մի քաղաքում յերիտասարդությունը գործնականորեն չունի ընդհանուր աշխատանքի այս կամ այն խնդիրը, թող լինի ամենափոքրը, թող լինի ամենաանշանը»:

Այս առաջին պատասխանն է, լուծել ընդհանուր աշխատանքի այս կամ այն խնդիրը: Նախ, պետք է դաստիարակել «պիոներական՝ լեզվով ասած՝ հասարակական աշխատանքներ կատարելու միջոցով:

Յերկրորդ: «Կոմունիստական բարոյականության հիմքը կազմում է կոմունիզմի ամրացման և ավարտման համար մղված պայքարը: Ահա կոմու-

նիստական դաստիարակության հիմքը, կրթությունը և ուսումը»։ Երկրորդ պատասխանը մեզ ասում է. մշակել կոմունիստական բարոյականության, վորի հիմքը կազմում է կոմունիզմի ամրապնդման և ավարտման համար մղված պայքարը։ Եվ այդ լիովին բավական է, վորպեսզի հնարավոր լինի գործնականորեն կառուցել աշխատանքը կոլեկտիվում, այնտեղ դաստիարակել կոմունիստ։

Կոլեկտիվում կոմունիստի դաստիարակության այդ մեթոդը, Լենինի հատուկ և պարզորոշ պատասխանների հիման վրա, հիմնականում արտահայտվում է յերկու ուղղությամբ—հասարակական աշխատանքում և քաղաքական կրթության մեջ, այսինքն՝ գործողության և գործողության գիտակցության մեջ։

Հասարկական աշխատանքը—գործողությանը և գործողության գիտակցումը—քաղաքական կրթությունը սերտորեն կապված են իրար։ Չի կարելի պիոներ կոլեկտիվում պատկերացնել աշխատանք, այսինքն գործողության, առանց այդ գործողության գիտակցության։ Չի կարելի պատկերացնել և հակառակը, այսինքն՝ հասարակական այս կամ այն յերևույթի գիտակցումը, առանց նրանից գործնական յեղրակացություններ անելու, առանց գիտակցությունից գործողության անցնելու։ Դասի յերկրորդ մասում մենք հնարավորություն ունենք համատեղ կանգ առնել միայն պիոներ կոլեկտիվում կատարվող աշխատանքի և քաղաքական կրթության (լուսավորության) հիմնական գծերի վրա։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԻՈՆԵՐԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ

Քաղաքական լուսավորությունը չի կարելի կտրել կոլեկտիվում կատարվող մնացած աշխատանքից, յերբ մենք խոսում ենք աշխատանքի գիտակցման մասին, առաջարկում ենք հենց քաղաքական լուսավորության կազմակերպումը։

Այժմ քննենք քաղլուսավորությունը դաստիարակության կազմակերպման տեսակետից՝ միջավայրի կազմակերպման հիման վրա։

Գլխավորը, վորին մենք պետք է ձգտենք, այդ այն է, վոր նախ կոլեկտիվը դա պիոներին հետաքրքրող հարցերի պատասխանը։ Ընդգծում ենք—նախ։ Մենք պետք է հաստատ հիշենք, վոր քաղաքականության մեջ դատարկ տեղեր չկան։ Յեթե մենք պատասխան չտանք հասարակական այս կամ այն յերևույթին, ապա այդ պարապ տեղը կլցվի անպայման, յեթե վոչ մեր կողմից, ապա ուրիշների, և հաճախ—դասակարգային թշնամու կողմից, վորը դատում է իր շահերի ոգտին—ի՞նչու մանուֆակտուրա չկա։ Նախ մենք պետք է պատասխանատանք դրան։ Յեթե մենք պատասխան չտանք, մի՛ կարծիք, վոր յերեխաները կմնան առանց նրան։ Նրանք չդիտեն այդ պատասխանը, և հաճախ վոչ այնտեղ, վորտեղ ճիշտ են ասում։ Ահա դրա համար մենք պետք է ձգտենք, վոր ամեն մի հասարակական աշխատանքում, ամեն մի հասարակական յերե-

վությի մեջ մենք լինենք առաջին շարքում, ժամանակին ճիշտ ուղղություն տանք յերեխաներին: Կոլեկտիվը պետք է ոգնի յերեխաներին պարզելու իրենց միջավայրում նկատվող հակասությունները, վորոնց հետ դեմ առ դեմ են գալիս նրանք: Այդ նշանակում է, վոր պետք է դաստիարակել աչքի առաջ ունենալով թե՛ դրական և թե՛ բացասական յերևույթը:

Մեծ հանցանք ենք գործում, յերբ յերեխաներին չենք տանում արտադրական խորհրդակցություններին, յերբ կոմյերիտական ժողովում, վորտեղ հաշիվ են տալիս հարվածային բրիգադները, պիոներները չկան, յերբ սոցիալիստական պայմանագրի կնքման ժամանակ պիոներները բացակայում են, յերբ տեղի չեն ունենում կոմյերիտական, կուսակցական բազմաթիվ կարևոր գործեր, պիոներներին մոռանում են: Յեթե վորևե կուսակցական կամ կոմյերիտական կարող է այդ մոռանալ, ապա կոլվարը յերբեք չպիտի մոռանա: Միջավայրի այդ դրական գործոնները վերին աստիճանի արժեքավոր են մեր դաստիարակության համար, և մենք պետք է մաքսիմալ չափով, 100 տոկոսով ոգտագործենք նրանց, աչքից չփախցնենք:

Իսկ ի՞նչպես վարվել բացասական յերևույթների հետ: Միջավայրի բացասական, վոչ կոմունիստական այն յերևույթներ, վորոնց մասին խոսում ենք այստեղ, առաջին հայացքից կարծես թե խանգարում են կոմունիստական դաստիարակությանը, նրանք և՛ խանգարում են և՛ միաժամանակ ոգնում:

Ոգնում են այսպես—պայքարելով բացասական յերևույթների դեմ յերեխաները կոփվում են, պայքարելով նրանց դեմ յերեխաները ստանում են ճիշտ դրույթ:

Որինակի համար վերցնենք մանր բաներ—յերեխաների ուշացումը, նրանց վերաբերմունքը ընկերների հանդեպ,—յեթե խորը մտածենք որանք մանր բաներ չեն,—վերաբերմունքը դեպի ժողովրդական դույքը և այլն: Այս հարցերը կարելի չեն լուծել տարբեր կերպով: Որինակ, հարցը դնել կոլեկտիվի խորհրդում, հանդիմանություն ուղղել, և այլն—սրանք հին ուսուցիչների հին սովորություններն են, վորոնցից պետք է հրաժարվել: Մենք պետք է հարցը դնենք սկզբունքային բարձրության վրա, վորպեսզի յերեխաները տեսնեն, թե ո՞ւր է տանում այդ:

Ընկերների հետ վարվելու հարցը պետք է կապել կոլեկտիվիզմի հետ, ցույց տալ նրանց եգոյիզմի, ինդիվիդուալիզմի և մասնավոր սեփականության արմատները, ցույց տալ, թե ինչպես վատ վերաբերմունք ունենալով դեպի իր դասակարգին պատկանող ընկերները մարդը որյեկտիվորեն ոգնում է դասակարգային թշնամիներին: Կամ թե ուշացումը: Մեր անխուսափելիությունից, անհոգությունից վորքան միջոցներ, ուժեր, եներգիա յեն կորչում զուր տեղը: Ահա այս տեսակետից կարևոր դեր են խաղում պիոներական որենքները: Վորոնք չատ հասկաց, դժբախտաբար, մնում են միայն գրքերում: Նրանք կմնան գրքերում այնքան ժամանակ, քանի դեռ յերեխաները այսոր չսովորեն այդ որենքները,

իսկ վաղը կմոռանան: Մինչդեռ պետք է որենքները կապել այս կամ այն գործի, այս կամ այն փաստի հետ: Եթե այդ որենքները կապվեն կյանքի հետ, ապա նրանք էլ դատարկ բառեր չեն լինի:

Եթե մենք այս հարցերը չդնենք սկզբունքային բարձրության վրա, մենք չենք կարող դաստիարակել այնպիսի մարդու, որը մեզ պետք է: Կոլվարի բղավոցից բացարձակապես ոչինչ դուրս չի գա: Իսկ պատիժներից մենք, իհարկե, պետք է հրաժարվենք: Անհրաժեշտ է, որ իրենք յերեխաները հասկանան լավն ու վատը: Այս տեսակետից Լենինը մեզ տվել է չափազանց հստակ մի ձևակերպում: Այն ամենը, որը ոգուտ է բերում բանվոր դասակարգի գործին, մեր տեսակետից բարոյական է, այն ամենը, որը ոգուտ չի բերում այդ գործին,—բարոյական չէ: Ինչպես տեսնում եք մենք չպատնիշ ունենք, և այդ չափանիշին պետք է հասցնենք յերեխաներին:

Շատ պատասխանատու գործ է մանկությունից դաստիարակելը: Իսկ ընդհանրապես մարդը դաստիարակվում է ամբողջ կյանքի ընթացքում, իրավացի չեն նրանք, որոնք կարծում են, թե դաստիարակվում են միայն յերեխաները: 60 տարեկան ծերունին էլ է դաստիարակվում: Իհարկե, կա տարբերություն: Յերեխաները շատ ավելի: շուտ են փոխվում, նրանք ավելի դալար են և փխրուն, ուստի նրանց հետ պետք է զգուշ վարվել, հատկապես պահպանել: Մարդուն մանկությունից դաստիարակելը ավելի հեշտ է: Լունաչարսկու աշխատություն-

ներից մեկում կա հետաքրքրական, թեև փոչ բոլորովին ճիշտ մի տեղ: Նա ասում է, որ մտուրը մանկան կարող է փափուկ կավի նման ձև տալ, հոկտեմբերիկին և պիոներականին դեռ կարելի յե ճկել (թեքել), պատանուն յերբեմն պետք է լինում կոտրել, իսկ հետո, ասում է նա—սապատավորվելու միայն գերեզմանը կուզդի: Վերջինի վերաբերմամբ նա անշուշտ իրավացի չէ, որովհետև մեր աչքի առաջ վերադաստիարակվում են դյուզոցիական մասսաները, բայց և այնպես պետք է ընդունել, որքան ուշ, այնքան ավելի դժվար է: Մենք պետք է հասկանանք, որ քանի դեռ յերեխաները պիոներներ են, այդ պետք է ոգտագործել նրանց կոմունիստական ունակություններ պատվաստելու համար: Մանկությունից ստացված կոմունիստական սովորությունները կոմունիստական ունակությունները շատ ավելի ուժեղ կարմատանան նրանց մեջ: Ուստի մեր դերը, կոմսոմոլի դերը հատկապես պատասխանատու յե, մանուկների դաստիարակության գործում:

Սակայն ինչպես պետք է կոնկրետ կերպով դնել քաղաքական լուսավորությունը պիոներկոլեկտիվում: Առաջին հարցը—դա թեմայի ընտրությունն է: Այն կոլվարը, որը կապված չէ յերեխաների ապրած միջավայրի հետ, յերբեք չի կարող գտնել անհրաժեշտ թեմաները և միշտ կկերակրվի միայն հրահանգներով: Կոլվարը պետք է կապված լինի յերեխաների և նրանց ապրած միջավայրի հետ: Յեթե ինքը դուրս է գտնվում այդ միջավայրից, պետք է հատկապես ծանոթանա նրան, գնա, տես-

նի, թե ինչ է կատարվում այդ միջավայրում և այնտեղից նյութեր քաղի: Սրատես կոլվարը կարող է իր շրջանում կատարած մի եքսկուրսիայի ընթացքում նշել մի շարք հետաքրքրական թեմաներ: Հետո թերթերը, գրքերը և այլն:

Թեմաների կարևորագույն աղբյուրը յերեխաների հարցերն են: Յեթե յերեխաները սովորեն հարցեր տալ իրենց հետաքրքրող բոլոր թեմաների մասին ապա կոլվարը կարող է վստահ լինել, որ թեմաներով ապահովված է: Մեր կոլվարը պիոներների հետ խոսում է միայն կոլեկտիվին վերաբերող հարցերի շուրջը, իսկ ի՞նչ է պատահել պիոների տանը, դպրոցում, ի՞նչ է անում նրա յեղբայրը, ի՞նչ է կարդացել գրքում, ի՞նչ է տեսել կինոյում,—այդ մասին չի խոսում, այնինչ, պետք է ասել, որ դուստ կոլեկտիվի գործերի տեսակարար կշիռը, այդ բան նեղ իմաստով, յերեխայի կյանքում այնքան էլ մեծ չե, որ ամբողջովին կլանի կոլվարի ուշադրությունը: Ամենևին վոչ:—Յերեխաների հետ պետք է խոսել անխտիր ամեն բանի մասին, որ վերաբերում է նրանց:

Այստեղ հարց է ծագում: Ինչպես սովորեցնել յերեխաներին հարցեր տալ: Այս այնքան էլ հեշտ գործ չե, բայց վոչ անհնար: Յեթե դուք մի քանի անգամ ճիշտ պատասխաններ տաք, այնուհետև յերեխաները ինքնաբերաբար կդան ձեզ մոտ: Բայց այստեղ կա մի դժվարություն, որը հաճախ չփոթեցնում է կոլվարին: Յեթե նա չգիտե հարցի ճիշտ պատասխանը, իսկ այդ բավական հաճախ է պատահում, ապա ի՞նչ պետք է անի: Այստեղ պետք է

զգուշացնել հետևյալից. պատահում է, որ նման դեպքերում կոլվարը սկսում է ստել, գլխից դուրս տալ, նյութից հեռացնելու համար: Ինդիրն այն է, որ յեթե պիոները իմանա, որ դուք ստել եք, այն ժամանակ դուք կընկնեք նրա աչքից, կկորցնեք նրա վստահությունը: Կոլվարը սովորաբար աշխատում է զանազան միջոցներ գտնել այդ ծանր դրությունից դուրս գալու համար—մի բան պիտի ասել վերջապես, թե չե յերեխաները կկարծեն, որ կոլվարը վոչինչ չգիտե: Ուրեմն ի՞նչ պետք անել, ի՞նչ ասել նման դեպքերում: Պետք է ասել. չգիտեմ: Դա կլինի միակ ճիշտ պատասխանը: Պետք է ասել—յես այդ չգիտեմ, բայց վաղը կպատասխանեմ: Վերջիվերջո, հո՛ կոլվարը չի՞ կարող ամեն ինչ իմանալ: Այդ պատասխանը ճիշտ կլինի նաև այն պատճառով, որ յերեխաները կտեսնեն, թե կոլվարն ասում է միայն իր գիտեցածը, իսկ յերբ չգիտե, ուղղակի ասում է որ չգիտեմ: Դրանից նրա հեղինակությունը չի ընկնի: Վերջապես այդ վարժեցնում է յերեխաներին ավելի պատասխանատու լինել իրենց պատասխանների, իրենց խոսքերի վերաբերմամբ: Այնպես որ այդ դժվարություններից կարիք չկա շփոթվելու: Պետք է հատուկ իմանալ որ յեթե մենք յերեխաներին սովորեցնենք հարցեր տալ նրանց հաջող հարցերի մասին, այն ժամանակ մենք ապահովված կլինենք թեմաներով քաղաքական լուսավորության համար:

Ուրեմն, ի՞նչ աղբյուրներ կան քաղաքական լուսավորության թեմաներ քաղելու համար: Կոլեկտիվի հասարակական աշխատանքը: Հասարակական

աշխատանքի պրոցեսում ծագում են բազմաթիվ հարակից հարցեր, և այդ բոլորը կարող է ծառայել որպես թեմա: Հետո, թատրոն, կինո, ակումբ հաճախելը, կուսակցության քաղաքական, տնտեսական կամ «կուլտուրական» հերթական լոզունգը: Այս կամ այն լոզունգը, իհարկե, հնարավորություն է տալիս նախապես նշելու այն թեմաները, որոնց շուրջը զրույցներ պետք է լինեն յերեխաների հետ և որոնք հետաքրքրում են պիոներներին: Վերջապես այնպիսի անսպառ և արժեքավոր մի աղբյուր, ինչպես յերեխաների հարցերը, և իհարկե, կոլվարի անձնական դիտողությունները:

Ցանկալի յե, որ կոլվարը թեմաների ցուցակ կազմի և ամեն անգամ որոշի, թե ո՞ր թեման պետք է առաջ տանել, ո՞րը կարևոր է տվյալ ժամանակ, և հետո մտածի, ինչպե՞ս մշակել թեման և ո՞ւմ հետ:

Պետք է հրաժարվել թեմաները անխտիր բոլոր յերեխաների հետ մշակելու տրադիցիայից: Կարելի յե մշակել առանձին խմբերի հետ, նայած պայմաններին:

Ինչպե՞ս մշակել թեմաները: Այստեղ մենք ունենք մի մեծ ցանկ: Սկսում են զրույցով: Հետևյալ թեման–կրկին զրույց: Հետո ելի զրույց: Զրույց զրույցի հետևից: Շատ կոլեկտիվներում անչափ զրույցներից յերեխաները սկսեցին ազմկել: Բանը զրույցի մեջ չե: Վատ զրույցը աշխատանքի վատ ձևն է, լավ զրույցը—լավ ձև: Սակայն թող լինի ամենալավ զրույցը, բայց յերբ այդ զրույցը կրկնվում է ամեն որ և վոչ մի նոր ձև չի կիրառվում, ապա վոչ վոք չի կարող տանել այդ բանը:

Թվենք աշխատանքի այն ձևերը, վոր կարելի յե նույպիսի իրավունքով ոգտագործել, ինչպես ոգտագործվում է զրույցը—եքսկուրսիա, բարձրաձայն ընթերցում, կինո, թատրոն, չափահասների ժողով, պատի թերթ, պլակատ, լոզունգներ, խաղ, փորձեր, յերգեր, կենդանի լրագիր, դեմոնստրացիա և կարնավալ: Այսքան ձևերով կարելի յե արդեն բազմազան դարձնել աշխատանքը: Բայց կա մի հարց. յեթե կոլվարը սիրում է թատրոն գնալ, յերեխաներին չարունակ թատրոն կտանի, սակայն բարեբախտաբար, թե դժբախտաբար միշտ տոմսակի փող չի լինում: Բայց զրույցների վերաբերմամբ մենք տեսնում ենք, քանի վոր դա ամենամատչելի յեղանակն է, նրանցով չափից ավելի յեն տարվում և ի չարը գործ դնում: Մեղանում յերեխաները հաճախ ճանձրանում են այն պատճառով, վոր մենք միևնույն ձևը կիրառում ենք բոլոր դեպքերում, ամեն մի թեմայի վերաբերմամբ:

Սակայն ձևեր գտնելը դեռ չի նշանակում լուծել հարցը: Պետք է կարողանալ լավագույն կերպով կիրառել այդ ձևերը—լավ զրույց, լավ եքսկուրսիան, լավ ընթերցումը,—ճիշտ և լավ կազմակերպել այդ գործը, ոգտագործել պատի թերթը և այլն: Այս տեսակետից շատ բացեր կան կոլվարների պատրաստման ծրագրերում: Պետք է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի այսպես կոչված մասնավոր մեթոդիկաները տեղ ունենան ծրագրերի մեջ: Կոլվարը պետք է տիրապետի աշխատանքի ձևերին և նրանց մեթոդիկային, այդ դժվար չե, մանավանդ պրակտիկ աշխատանքների համար, վորոնք այսոր

սխալվելով, վազը կարող են ուղղել իրենց սխալները, սովորել գործնական աշխատանքի ընթացքում:

Կոլվարը չպետք է հույսը դնի միայն իր սեփական ուժերի վրա: Այն կոլվարը, որը սահմանափակվում է միայն իրանով, շուտով կսպառի իր ուժերը և կձանձրացնի յերեխաներին: Պետք է կոլեկտիվի աշխատանքում ներգրավել շափահաս բանվորներին, կոմյերիտականներին, կուսակցական և պրոֆմիութենական ակտիվը:

Այստեղ լինում են հետևյալ կարգի սխալներ—վերցնում են մի ընկերով և ասում—անց կացրու այսինչ աշխատանքը: Նա գալիս է, անց է կացնում աշխատանքը, բայց անհաջող: Նման դեպքերում սովորաբար ասում են—նա լավ կոմունիստ է, լավ ինժիներ, բայց յերեխաների համար անպետք է—Վոչ, նա պետքական է, միայն պետք է նախ սովորեցնել նրան ճիշտ մոտենալ յերեխաներին, փոխանակել նրանց հետ փորձը, զրուցել նրանց հետ, իմանալ, ինչի՞ մասին պետք է խոսի, ինչպե՛ս պետք է խոսի, վո՛րքան պետք է խոսի և այլն: Այդ բոլորի մասին պետք է պայմանավորվել և միայն դրանից հետո ուղարկել յերեխաների մոտ: Կարծում ենք, վոչ վոք չի վիրավորվի հարցի նման դրումից:

Սակայն անկախ նրանից, թե կոլվարը ո՛ւմն է ներգրավում կոլեկտիվի աշխատանքում, կոլվարի անձնական որինակը հսկայական դեր է խաղում: Կոլվարը իր վարքով, իր անձնական կենցաղի կազմակերպումով—նրա կյանքի տանը, արտադրության մեջ, յերեխաների շրջանում, նրանց բացա-

կայության—միևնույն է, պետք է զգա ինչ վոր լրացուցիչ պատասխանատվություն: Նա պատասխանատվություն է կրում վոչ միայն կուսակցության կամ կոմյերիտմիության անդամ, այլև վորպես կոլվար:

Վորքան կուզեք՝ ասեք յերեխաներին, վոր հայհոյանք վատ բան է, անցյալի մնացորդ է, բայց յեթե դուք ինքներդ հայհոյում եք, պարզ է, վոր ձեր խոսքը վոչ մի նշանակություն չի ունենա: Նույնը ծխելու մասին: Ագիտացիա յեք մղում ծխելու դեմ, բայց քիչ հետո ինքներդ ծխում եք: Կամ թե կազմակերպում եք այնպես, վոր տղաները և աղջիկները միասին նստեն, իսկ ինքներդ սեմինարում, կուրսերում կամ կոմյերիտական ժողովներում նստում եք այնպես, վոր «տղերքը» և «աղջիկները» ջոկ-ջոկ նստեն: Սրանք չնչին բաներ չեն: Մենք խոսում ենք կանանց իրավահավասարության մասին: Ցերը դուք ավելի եք խոսում, իրար հետ, ավելի շատ եք նստում միասին, աշխատում միասին, դրանով իրոք մոտենում եք իրավահավասարության:

Վերջացնելուց առաջ պատասխանենք մի հարցի, վոր տարակույս է առաջացնում ընկերների մեջ, «կկարողանա՞ արդյոք կոլվարը լուծել իր առաջ դրված խնդիրները»: Այս հարցին կարելի յե տալ միայն մի պատասխան—«այո՛»: Մենք ունենք յոթը տարվա փորձ: Սովորաբար անում են հետևյալ պատճառաբանությունները՝ կոլվարների կրթությունը անբավարար է, յերբեմն յերեխաները յոթերորդ խմբերից են, իսկ կոլվարը ավարտել է միայն

հինգերորդ այն: Բանն այդ չէ պետք է յերեխաներին տալ դասակարգային վորոշակի դրություն, իսկ կոլվարը, լինելով կուսակցության, կոմյերիտմիության անդամ, կապված լինելով բանվոր դասակարգի հետ, ստանալով բայշևիկյան կուլտուրություն, այդ ամենը իր հետ բերում է կոլեկտիվ, ահա՛ հիմնականը: Միայն պետք է, վոր կուսակցականները, կոմյերիտականները ավելի լավ դեկավարություն և ոգնություն ցույց տան:

Բայց մյուս կողմից կոլվարը պետք է ամեն կերպ աշխատի իր քաղաքական պատրաստության մակարդակը բարձրացնել: Ամեն որ կարդա թերթերը: Պետք է սովորություն դարձնել թերթ կարդալը: Պետք է սովորել, ուսումնասիրել, խորանալ յուրջ դրքերի մեջ:

Հետո կոլվարը պետք է դրաղվի մանկական դրքերի, թերթերի և կոլվարների համար հրատարակվող մեթոդական դրականության ընթերցումով:

Ցեվ վերջապես՝ հեռակա ուսուցումը, վորն այժմ լայն ծավալ է ստանում: Շրջկոմը և շրջանային բյուրոն այս տեսակետից կարող են տալ անհրաժեշտ տեղեկանքներ: Մանկական շարժման առաջ կանգնած խնդիրները պահանջում են ուժեղացնել ուշադրությունը դեպի կոլվարը:

Կոմյերիտմիության դերը նոր սերնդի դաստիարակության գործում այժմ վերին աստիճանի ուժեղանում է: Պատասխանատվությունը մեծ է: Կոլվարի դերը, նրա պարտականություններով միասին, այժմ բարձրանում է աննախընթաց աստիճանի վրա:

ՀՍՍՀ-ՍՍՌ